լիտի միջնորդութեամբ խնդրեցին տալ իրենց պետական կնիք կրող մի արքունի հրովարտակ, որ Բարձրագոյն անուամբ խոստացուած արտօնութիւնները վաւերացնէր, և այդպիսով գեղջուկների կասկածները փարատուէին: Հայերն իրենց կողմից ռուսաց կառավարութեան հրաւէրն ընդունեցին. մահմեդական լծից ազատուելու և հզօր քրիստոնեայ պետութեան հովանին գտնելու յոյսը այն աստիճան ոգեորել էր նրանց, որ ամենևին չվախեցան տեղափոխութեան վտանգներից:

Ղրիմի խանն և ամբողջ մահմեդական ազգաբնակութիւնը Ռուսաստանի այդ ձեռնարկութեան լուրն առնելուն պէս վերին աստիճան չփոթուեցան. քրիստոնեաների գաղթն ահագին չարիք էր սպառնում նրանց և անշուշտ պիտի վնասէր նրանց նիւթական բարօրութեան, քանի որ արդիւնք տուողը միայն քրիստոնեայ ժողովուրդն էր: Սկզբում խանը չէր հաւատում լրի ստուգութեան և բացատրութիւն խնդրեց գեներալ պորուչիկ Ա. Վ. Սուվորովից, որ և պատասխան տուաւ, թէ Կայսրուհին մարդասիրութեան զգացման և քրիստոնէական պարտքին հետևելով, հաճել է իւր սահմանները տեղափոխել քրիստոնեաներին, «որպէս զի նրանք մօտալուտ աղէներից և սպառնալուն կոտորածից փրկուին»: Ապա Սուվորովը յոյս է յայտնում, թէ խանը ոչ միայն չի հակառակուիլ, այլ դեռ նպաստաւոր կը լինի, և յարում՝ «որովհետև Ձեր անձի մասին հոգ կը տարուի և Դուք վարձատրութիւն կըստանաք»: Այդ յուսադրութիւնը ոչ միայն չմիամտացրեց խանին և միրզաներին, այլ կատաղութիւն պատճառեց նրանց: «Վ սեմա փայլ խանը», գրում էր Պոտեմկին իշխանը Սուվորովին, «զայրոյթից ուժասպառ լինելով, Բախչիսարայից դուրս գնաց՝ օդափոխութեան համար»: Նոյնչափ դժգոհ էին և Ղրիմի թաթարները, որոնք ասում էին, թէ քրիստոնեաներին կորցնելն իրենց համար «հոգին մարմնից անջատելուն հաւասար է»: Երբ թաթարները տեսան, որ «սպառնալիքով, յորդորանքով, խոստումներով և իրենց յատուկ ուխտադրուժ նենգութիւններով» նպատակին հասնել անկարող են, սկսան աղերսական գրեր և նոյն իսկ պատգամաւորներ ուղարկել ռուսաց արքունիքը. սակայն և այնպէս նրանց բոլոր ջանքերը, Ղրիմում պահելու հայերին, զուր անցան: Սուվորովի կարծիքով՝ «պէտք է վարձատրել թաթարներին մի քանի մասնաւոր պարտքերի փոխարէն... իսկ քրիստոնեաներին անհրաժեշտ է նրանց կորցրած կայքերի և

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան